ԳԼՈՒԽ Թ.

ՀԱՅ — ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թողնենք մի առ ժամանակ Տրապիզոնի բանակցութիւնները և նայենք, թէ այդ օրերին ինչ էր կատարւում ռազմաճակատում։

Տեսանք արդէն, որ թիւրքերի դրդումով, դեկտեմբեր ու յունուար ամիսներին, Անդրկովկասի ամբողջ տարածութեան վրա և գրաւած վայրերում տեղի էին ունենում մահմետական շարժումներ, իսկ յունուարի կէսերին Վեհիբ փաշան բողոքեց «հայկական գազանութիւնների» դէմ՝ հաղորդելով, թէ ինքը հրամայել է իր բանակին շարժուել մինչև ռուս զօրքի հետ շփման մէջ մտնելը։

Փետր. 25-ի երեկոյեան, Անդրկովկասեան Կոմիսարիատը Վեհիբ փաշայից ստացաւ մի նոր հեռագիր, որ ասում էր. «Թիֆլիս, գլխաւոր հրամանատարին, պատնէն Անդրկ. կառավարութեան նախագահին։ — Հաղորդում եմ բառացի հէնց հիմա ստացած երկու ֆրանսերէն հեռագիրները։ Առաջինը՝ կովկասեան ռուս բանակի գլխաւոր հրամանատար զօր. Լերեղինսկիին։ Ձերդ գերազանցութիւն, Ռուսաստանի փառապանծ հանրապետութիւնը՝ համաձայնելով պարպել Բաթումի, Կարսի և Արդահանի շրջանները՝ հէնց նոր այդ մասին ստորագրեց հաշտութեան դաշնագիր։ Ի հետևանս այդ բանի պատիւ ունեմ հաղորդել ձերդ գերազանցութեան, որ ես այս պահուս ստացայ իմ սպարապետից մի հրաման, որի հիման վրա խնդրում եմ ձեզ ամենակարճ ժամանակում դատարկել յիշեալ շրջանները։ Սպասելով ձերդ գերազանցութեան պատասխանին՝ խնդրում եմ ընդունել ամենախորին յարգանաց հաւաստիքը. Վեհիբ Մէհմէտ»։

Երկրորդ հեռագիր. «Կովկասեան ռուս բանակի հրամանատարին։ Ձերդ գերազանցութիւն, հիմնուելով ձեր ներկայութեան վրա Էրզրումում՝ ես ենթադրում էի, որ հայերը յանդգնութիւն չեն ունենայ գործելու դաժանութիւններ այդ քաղաքում ու շրջակայ գիւղերում և սկզբում հրամայեցի կանգնեցնել մեր զօրքերի յառաջխաղացումը յիշեալ գծերի վրա։ Այսօր ստացած տեղեկութիւնների հիման վրա, ձերդ գերազանցութեան հեռանալուց յետոյ Էրզրումում և քաղաքի շրջակայքում տեղի են ունեցել անհաշիւ գազանութիւններ հայերի կողմից, այդ պատճառով ես ինձ պարտաւորուած եմ զգում հաղորդելու ձերդ ազնուութեան, որ մենք հարկադրանքի տակ ենք, ըստ կարելւոյն չուտ, ազատելու սպառնալիքի ներքոյ գտնուող շրջանները։ Այդ առթիւ խնդրում եմ, ձերդ գերազանցութիւն, այս կամ այն ձեւով յայտարարել այդ բռնաւորներին, որ նրանց դիմադրութիւնը կարող է ունենալ իբրև հետեւանք խիստ ճնշումներ և անսպասելի արդիւնք։ Օգուտում եմ առիթից, ձերդ գերազանցութիւն, տեղեկացնելու ձեզ, որ մեր զօրքերի վերադարձը Տրապիզոն ձեր զօրքերի կողմից ընդունուեց անկեղծ ու սրտագին։ Ես երջանիկ էի վկայ լինելու այդ հազուադիւտ պատմական տեսա-